ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

31 հուլիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

105
(2955)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ԿՐԿԻՆ ԿԲԱՑԻ ԻՐ ԴՌՆԵՐԸ



Սեպտեմբերի 28-29-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կարեւոր իրադարձություններ են սպասվում. տեղի կունենան Մայր Տաճարի վերաօծումը եւ սրբալույս Մյուռոնի օրհնությունը:

Մայր աթոռում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, պատրաստվում են այս կարեւոր իրադարձություններին, քանի որ մտադիր են հավուր պատշաճի եւ մեծ շուքով կազմակերպել ծիսակատարությունները:

Ավելին, մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ի թիվս շատ հյուրերի Ամենայն Հայոց կաթողիկոսը 1500 սփյուռքահայի է հրավիրել՝ արարողությանը մասնակցելու:

Հիշեցնենք, որ Գրիգոր Լուսավորչի կարգադրությամբ 4-րդ դարի սկզբին կառուցված Սուրբ տաճարի նորոգման հետազոտական աշխատանքները սկսվել են դեռ 2012 թվականի գարնանից, իսկ 2018-ից անցան բուն շինարարական աշխատանքներին:

Վերանորոգման աշխատանքները նախատեսել էին ավարտին հասցնել 2022 թվականին, բայց պարբերաբար, ինչ-ինչ պատճառներով այն հետաձգվում էր:

Նորոգման աշխատանքներն այժմ ամբողջությամբ ավարտվել են, իսկ սեպտեմբերին Մայր Տաճարի վերաօծմամբ եւ Մյուռոնի օրհնությամբ Էջմիածնի Մայր տաճարը կրկին կբացի իր դռները:

Նկատենք, որ այդ պատմական իրադարձության շրջանում եկեղեցի-ՀՀ իշխանություն լարվածությունը մեծ թափ է հավաքում, թեժ քննարկումներ են ընթանում, թե արդյոք Նիկոլ Փաշինյանին եւ իշխանության մյուս ներկայացուցիչներին պե՞տք է հրավիրել, թե՞ հարկ է առաջնորդվել՝ «Աստծո տաճար գալու համար հրավեր չի լինում» պատգամով:

Մայր աթոռում չգիտեն ինչպես վարվել, արդյոք հրավերի դեպքում Նիկոլ Փաշինյանը կամ իշխանության ներկայացուցիչները կգա՞ն, թե՞ հերթական անգամ կխուսափեն Կաթողիկոսի հետ դեմ առ դեմ հանդիպումից:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ այս տարվա փետրվարի 1-ին ՌԴ դրոշի ատրիբուտները պղծող ՀՀ քաղաքացի Սամվել Շիրինյանի գործով դատարանը վճիռ է կայացրել: Սամվել Շիրինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման համար, եւ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկումը՝ 1 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ Սամվել Շիրինյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձեւով պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 3 տարի ժամկետով: Ինչպես հայտնի է՝ Հայաստանում Ռուսական տան ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը դիմել էր ՀՀ գլխավոր դատախազին՝ Երեւանում Լենինգրադի պաշարման ժամանակ զոհված երեխաների հիշատակին նվիրված հուշակոթողի նկատմամբ անհարգալից միջադեպի գործով: «Ազգամիջյան ատելություն հրահրելը եւ բռնության կոչերը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի դեպքերի հիման վրա, անընդունելի են: Տեղի ունեցածի մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն: Պարզվել էր, որ հունվարի 27-ին քաղաքացի Սամվել Շիրինյանը ցուցադրաբար պոկել եւ տրորել է Ռուսաստանի Դաշնության դրոշը խորհրդանշող ժապավենները, տապալել է ծաղկեպսակները՝ այդ ամենն ուղեկցելով Ռուսաստանի հասցեին վիրավորական մեկնաբանություններով եւ իր գործողությունը Tik Tok սոցիալական ցանցում տեղադրելով»,- գրել էր նա: ArmLur.am-ը հայտնել էր, որ Սամվել Շիրինյանը հայտնաբերվել էր Բագրատաշենի անցակետից. նա ցանկացել էր հատել ՀՀ սահմանը, սակայն իրավապահները կարողացել էին կանխել նրա փախուստը:

Երբեմնի ընդդիմադիր գործիչ, Վահե Հակոբյանի ղեկավարած «Վերածնվող Հայաստան» կուսակցության հիմնադիրներից հանդիսացող Քաջարանի քաղաքապետի «ծաղկային դիվանագիտությունը» տապալվել է: Թեեւ 2022 թվականին Փարամազյանը Նիկոլ Փաշինյանի տիկնոջը՝ Աննա Հակոբյանին, ծաղիկներ նվիրեց, փոխարենը, ըստ պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունների, օրերս Աննա Վարդապետյանից ստացել է ծանուցագրեր՝ իր ենթադրյալ ապօրինի ծագման միլիարդները հետ վերադարձնելու թեմայով: Ուշագրավն այն է, որ Փարամազյանն իր պաշտոնական կենսագրությունը սկսել է սրբագրել՝ գրելով, որ ՌԴ Օմսկ քաղաքում ընդունվել է բուհ, բայց չի սովորել այնտեղ՝ ՀՀ-ում աշխատանքի անցնելու պատճառով: Փարամազյանը հաշվի չի առել, որ «Ժողովուրդ» օրաթերթի տրամադրության տակ է իր կենսագրության սկզբնական՝ ենթադրյալ կեղծ տարբերակը, ըստ որի՝ նա ավարտել է սույն բուհը եւ ստացել իրավաբան-իրավագետի որակավորում (Լուսանկարները տես ArmLur.am կայքում):

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նախօրեին իշխանական մի խմբով նիստ է գումարվել, որի ընթացքում քննարկվել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի հեռացման հարցը: Հայտնի է, որ տեւական ժամանակ է, ինչ իշխանությունները դժգոհ են առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի աշխատանքից, փորձում են գտնել այնպիսի մեկին, ով կփոխարինի մասնագիտությամբ իրավաբան առողջապահության ոլորտի գլխավոր կազմակերպչին՝ նախարարին: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ այդ նիստի ժամանակ քննարկվել է Ավանեսյանին փոխարինողի պաշտոնում ընտրել նրա տեղակալ Լեւոն Հակոբյանին: Նշենք, որ առողջապահության նախարարի տեղակալ Լեւոն Հակոբյանը տեղակալի իր հաստիքին նշանակվել է 2019 թվականի մարտի 25-ին, սակայն, մինչեւ տեղակալ աշխատելը, իր գործունեությունը սկսել է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչությունից: Թիվ 5 պոլիկլինիկայում վերջինս եղել է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ ողջ օրվա ընթացքում փորձեց պարզել այս տեղեկությունը հենց Լեւոն Հակոբյանից, սակայն վերջինիս աշխատասենյակի հեռախոսազանգերին այդպես էլ որեւէ մեկը չպատասխանեց: Նույն հարցով դիմեցինք նաեւ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի մամուլի խոսնակ Մարիամ Ծատրյանին, որը մեզ հետ զրույցում ասաց, որ ոչ մի տեղեկություն չունի, եւ այս պահին ընթանում է բնականոն աշխատանք՝ նախարար Ավանեսյանի գլխավորությամբ:

ԶՐՈՒՅՑ

# «ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԷՐԴՈՂԱՆԻՆ ՉԻ ԱՐՁԱԳԱՆՔԻ»

**ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշում է՝ «ընդդիմությունը, եթե այս ընթացում արդյունավետ աշխատած լիներ, ապա հիմա կառավարության պատասխանական կայֆում Նիկոլ Փաշինյանի լուսանկարը չէր լինի»:**

ԱԺ պատգամավորը վստահեցնում է՝ ընդդիմությունը նոր թեկնածուի հարց չի քննարկել, սատարելու են Բագրատ Սրբազանին:

**-Պարոն Մամիջանյան, շուրջ երկու տարի ընդմիջումից հետո սահմանին կայացել է Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների՝ Արարատ Միրզոյանի եւ Սերդար Քըլըչի հանդիպումը: Հանդիպումից օրեր առաջ էրդողանը սպառնալից հայտարարություն է արել՝ ինքնախոստովանություն այն մասին, որ Թուրքիայի բանակը անմիջական մասնակցություն է ունեցել 44-օրյա պատերազմին: Ձեր կարծիքով՝ ի՞նչ պետք է սպասել այս հանդիպումից: Ի՞նչ է այն տալու հայ-թուրքական հարաբերությունների զարգացման ֆոնին:**

-Ես կարծում եմ, որ այս հանդիպումներից ոչինչ սպասել պետք չէ: Եվ ոչ միայն այն պատճառով, որ Փաշինյանի թիմը ունակ չէ բանակցություններ վարելու, այլ նաեւ այն պատճառով, որ որեւէ շոշափելի օրակարգ չկա: Վերջին պայմանավորվածություններից՝ 3-րդ երկրների քաղաքացիների համար սահմանի բացումը, որը մինչեւ այսօր տեղի չի ունեցել՝ ինչպես իրենց կողմից պայմանավորված ամեն բան:

Հուլիսի 1-ին պիտի սահմանագծման եւ սահմանազատման հարցում առաջընթաց լիներ, բայց չկար:

Ինչ վերաբերում է էրդողանի հայտարարությանը, ապա դա նոր չէ: Թուրքիայի խորհրդարանում 2020 թվականի բյուջեի կատարողականի զեկուցման ժամանակ, եթե չեմ սխալվում իրենց փոխվարչապետը, ձեռքբերումները թվարկելիս նշեց, որ Թուրքիան անմիջականորեն ներգրավված է եղել 44-օրյա պատերազմում: Ես ակնկալիքներ չունեմ, որ այս «իշխանություն» կոչվածները որեւէ կերպ կարձագանքեն վերոնշյալ հայտարարություններին: Իրենք արձագանքում են բացառապես ընդդիմադիրներին: Ադրբեջանից եւ Թուրքիայից հնչող ռազմատենչ կամ վիրավորական արտահայտություններին իրենք չեն պատասխանում:

**-Հայկական կողմից արձագանք չկա, սակայն Ադրբեջանն է ծանր տարել եւ հերքել է՝ նշելով, որ որեւէ այլ երկրի բանակ չի մասնակցել 44-օրյա պատերազմին. սա կարո՞ղ է որեւէ կերպ անդրադառնալ ադրբեջանաթուրքական հարաբերությունների վրա:**

-Իհարկե չի կարող: Չարժե մտնել մատի եւ մատանու արանքը. նման հայտարարությունները որեւէ լուրջ հետեւանք չեն կարող ունենալ՝ հաշվի առնելով Ադրբեջանի կախումը Թուրքիայից:

Ինչ վերաբերում է այս հանդիպմանը, ապա մոռացա նշել, որ արդեն որերորդ անգամ, վերջին վեց տարիների ընթացքում վատ ավանդույթ դարձած հանդիպման մասին հայկական կողմը ոչինչ չէր ասել, Հայաստանում որեւէ մեկը, թե՛ պաշտոնական, թե՛ ոչ պաշտոնական դիրքերից ոչինչ չէր ասել: Հայկական տիրույթ այդ ինֆորմացիան եկել է թուրքական լրատվական հարթակից, ապա մերձիշխանական մի լրագրող «Թվիթեր»-ում գրառում էր կատարել:

Ամեն բան շարունակվում է նույն ձեւով: Իշխանությունները թաքուն, ժողովրդի մեջքի ետեւում վարում են բանակցություններ՝ անհասկանալի օրակարգով, անհասկանալի, չիստակեցված կարմիր գծերով. որեւէ բան չի փոխվել:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ԱՆՑԿԱՑՐԵԼ ԵՆ 5-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հուլիսի 30-ին Հայաստանի եւ Թուրքիայի կարգավորման գործընթացի հատուկ ներկայացուցիչներ, Հայաստանի Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը եւ դեսպան Սերդար Քըլըչը հինգերորդ հանդիպումն են անցկացրել երկու երկրների սահմանի Մարգարա-Ալիջան անցման կետում:

Ինչպես հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից՝ նրանք վերահաստատել են նախորդ հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները:

Բացի այդ, նրանք պայմանավորվել են տարածաշրջանային զարգացումներին համապատասխան գնահատել տեխնիկական կարիքները, որոնք հնարավորություն կընձեռեն գործարկել Ախուրիկ/Աքյաքա երկաթուղու սահմանային անցակետը, ինչպես նաեւ փոխադարձաբար դյուրացնել վիզայի ընթացակարգերը դիվանագիտական/պաշտոնական անձնագրեր ունեցողների համար:

Վերջում նրանք վերստին ընդգծել են կարգավորման գործընթացն առանց որեւէ նախապայմանի շարունակելու պայմանավորվածությունը՝ երկու երկրների միջեւ լիարժեք կարգավորման վերջնական նպատակին հասնելու համար:

## «ՀՈՒՆԻՑ ՀԱՆԵԼ Է ԲԱՔՎԻՆ». Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«Թուրքիայի նախագահի խոստովանությունը՝ Արցախի դեմ պատերազմ սանձազերծելու ու Արցախ ներխուժման գործում ուղիղ մասնակցություն ունենալու վերաբերյալ, հունից հանել է Բաքվին», - այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ ԱԺ պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:

«Ադրբեջանից մեկնաբանելով էրդողանի հայտարարությունը՝ այն որակել են հիմքերից զուրկ, նշելով, որ Թուրքիան ու Պակիստանը միայն քաղաքական աջակցություն են ապահովել 44-օրյա պատերազմում:

Այստեղ նոր բան չեմ ասի, եթե նշեմ, որ ռեգիոնում ներկայացված հիմնական դերակատարների համար ի սկզբանե պարզ էր Թուրքիայի ուղիղ մասնակցությունը պատերազմական գործողություններին՝ ահաբեկիչների հավաքագրումից մինչեւ օպերացիաների պլանավորում, մշակում, որոշ զինատեսակների կիրառում եւ այլն:

Հիմա ո՞րն է խնդիրը, որ Բաքվից նյարդայնություն են դրսեւորում. կոտրվում է քարոզչական այն հիմնասյուններից մեկը, թե իրենց բանակը մարտունակության այն մակարդակին է եղել, որ պատերազմ է հաղթել, սա այն դեպքում, որ մի կողմից Թուրքիայի մասնակցությունն է եղել, մյուս կողմից ՀՀ իշխանության նպատակային տապալումները:

Երկրորդ, Ադրբեջանը միշտ փորձել է կեղծ թեզեր շրջանառել, որ հայկական կողմը 90-ականների պատերազմն արտաքին օժանդակությամբ է հաղթել, իսկ հիմա նրա գլխավոր դաշնակիցը թեման Բաքվին է վերադարձնում:

Մի բան շատ ակնհայտ է. 2020 թվականին պատերազմն այսպիսի խայտառակ ելք չէր ունենա, եթե ՀՀ-ում իշխանության ղեկին չլիներ այս հանձնողականների, պարտվողականների, հայրենավաճառների հավաքածուն», - գրել է նա:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏ Է. ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆ

Բագրատ Սրբազանի առաջնորդած պայքարի շրջանակում հանդիպումները Հայաստանի տարբեր մարզերի բնակիչների հետ շարունակվելու են: Առաջիկայում Սրբազան պայքարի մասնակիցները Գեղարքունիքի մարզ են այցելելու: Այդ մասին լրագրողների հետ զրույցում ասաց պայքարն առաջնորդող Բագրատ Սրբազանը: Ինչ վերաբերում է օրերս Վայոց ձորի մարզ կատարած այցին, ապա Սրբազանը նշեց՝ արդյունքները առավել քան տպավորիչ են, մարդիկ ոգեւորված են, սպասումները շատ մեծ են. իրենց շատ ջերմ են դիմավորել, քննարկումներն ու հանդիպումներն արդյունավետ են եղել: Սրբազան պայքարին ողջույններ են ուղարկել նաեւ մեր մարտական դիրքերից:

«Գյուղում տուն չկար, որ չողջուներ, տուն չհրավիրեր, մարդիկ չկանգնեին, չխոսեին: Այնպես որ, վերստին պիտի հաստատեմ՝ մեր երկրում առկա մթնոլորտը փոփոխությունների մթնոլորտ է: Եվ մեզ մնում է դրանք ճիշտ ճանապարհով հասցնել տեղ»,- ասաց Բագրատ Սրբազանը:

## «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՐԹՈՒՂԻՆ»՝ Ի ՎՆԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Իրանի Իսլամական Հանրապետությունը «Զանգեզուրի երթուղին» համարում է ի վնաս Հայաստանի եւ շարունակում է տեր կանգնել այս դիրքորոշմանը: Այս մասին, ինչպես գրում է Mehr գործակալությունը, ասել է Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ Սեյեդ Ալի Խամենեին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը:

«Մենք խորապես հավատում ենք Հայաստանի հետ հարաբերությունների զարգացմանը: Երկու երկրների միջեւ համագործակցությունը կշարունակվի շահերի հիման վրա եւ անկախ այլ մարդկանց քաղաքականությունից: Օտարերկրացիները չպետք է սահմանափակումներ ստեղծեն երկրների՝ հարեւանների հետ հարաբերությունների համար»,- ասել է նա:

Փաշինյանն իր հերթին ասել է, որ Հայաստանը բազմիցս հայտարարել է, որ չի ընդունում ոչ մի անդրտարածաշրջանային երթուղի իր տարածքում:

## ՊԵՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ

Հայաստանի Հանրապետության նոր Պետական ատլասի տեխնիկական առաջադրանքի կազմման եւ մշակման նպատակով միջգերատեսչական աշխատանքային խումբ կստեղծվի, որոշումը ստորագրել է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը:

Աշխատանքային խմբի համակարգողը կլինի ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալը: Նա եռամսյա պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ պետք է ներկայացնի տեղեկատվություն աշխատանքային խմբի կատարած աշխատանքների իրականացման ընթացքի մասին: Խմբի կազմում կլինեն նաեւ ԱԱԾ աշխատողներ, ներկայացուցիչ ՊՆ-ից, այլ նախարարություններից ու պետական կառույցներից: Կազմում է նաեւ ԵՊՀ ռեկտորը:

## ԻՐԱՎԻՃԱԿ

## ՄԱՀԱՑԵԼ Է ԱԺ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՎՈԼՈԴՅԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

Մահացել է հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Վոլոդյա Բադալյանը:

Նա 76 տարեկան էր: Հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա հուլիսի 31-ին՝ ժամը 18:00-ին Սուրբ Սարգիս (Նոր Նորքի 5-րդ զանգված) եկեղեցում: Վերջին հրաժեշտը՝ նույն վայրից՝ օգոստոսի 1-ին՝ 12:30-ին:

ArmLur.am-ի եւ «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը ցավակցում է Բադալյանի ընտանիքի անդամներին եւ հարազատներին:

## ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԵՄ-Ի ՀԵՏ

Հայաստանը ներկայում անցնում է Եվրամիության հետ հարաբերությունների էական խորացման գործընթաց: Այս մասին Կիպրոսի ԱԳ նախարարի հետ ասուլիսի ժամանակ ասել է Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

«Վիզաների ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկը եւ Խաղաղության եվրոպական գործիքի ներքո Հայաստանին աջակցություն տրամադրելու որոշումներն ավելի մեծ համագործակցության, ավելի մեծ պատկերի միայն երկու օրինակն են: Մենք ներկայում անցնում ենք ԵՄ-ի հետ մեր հարաբերությունների էական խորացման գործընթաց, ունենք գործընկերության նոր օրակարգ, մենք մտածում եւ աշխատում ենք նոր մեխանիզմների եւ գործիքների շուրջ, որոնք կարող են օգտագործվել: Ավելացնեմ նաեւ, որ Հայաստանի ժողովուրդը, մենք ունենք եվրոպական ձգտումներ, եւ ԵՄ-ն ճանաչում է այդ ձգտումները, ուստի հիմա մենք միասին մտածում եւ աշխատում ենք, ինչպես ասացի, նոր գործիքների, Հայաստանը ԵՄ-ին ու անդամ երկրներին եւ հակառակն ավելի մոտեցնելու նոր մեխանիզմների շուրջ: Կցանկանայի նաեւ կրկնել այն արտահայտությունը, որը ՀՀ վարչապետն ասաց Եվրոպական խորհրդարանում իր ելույթում. «Հայաստանն իր կողմից պատրաստ է ԵՄ-ին մոտենալ այնքան, որքան ԵՄ-ն դա հնարավոր կհամարի»,- ասել է Միրզոյանը:

Նախարարը հավելել է, որ ոչ միայն ԵՄ-ի, այլ նաեւ ԱՄՆ-ի հետ Հայաստանը համատեղ աշխատում է ծրագրի վրա, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի Հանրապետության դիմակայունության մակարդակը այս դժվարին ժամանակներում՝ նկատի ունենալով այն սպառնալիքներն ու մարտահրավերները, որոնք կան Հայաստանում եւ Հայաստանի շուրջ:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

# Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ Նուարդ Վարդանյանը չի ներկայացրել պարզաբանում իր հայտարարագրում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ:**

«Ժողովուրդ» օրաթերթը 2024 թվականի փետրվարին հրապարակել էր «Նուարդ Վարդանյանի հայտարարագրում կեղծի՞ք կա» վերտառությամբ հոդված:

Հոդվածում, մասնավորապես, ասվում է. «Ուսումնասիրելով պաշտոնատար անձանց հայտարարագրերը՝ հաճախ ենք առնչվում անճշտությունների, կոռուպցիոն ռիսկեր պարունակող տվյալների, ինչպիսիք են, օրինակ, միլիոնավոր կանխիկ դրամական միջոցները, որոնց աղբյուրները նշված չեն, մեկ օրում մի քանի տուն գնելու փաստերը եւ այլն: Այս անգամ թիրախում է Երեւանի ավագանու իշխող խմբակցության անդամ Նուարդ Վարդանյանը, որը Ford մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի մեջ է: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ Վարդանյանի հայտարարագրերը առաջացնում են հարցեր, բայց ոչ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի շրջանում: Այսպես, Վարդանյանը 2021թ. հայտարարագրում նշում է, որ 2022 թվականին ձեռք է բերել 2018 թվականի արտադրության Ford մակնիշի մեքենա, ինչը գուշակության ոլորտից է: Նույն 2021թ. հայտարարագրի համաձայն՝ Վարդանյանը Տիգրան Ավինյանի եղբայր Դավիթ Ավինյանից ձեռք է բերել եւս մեկ Ford՝ 2018 թվականի արտադրության, եւ տարվա վերջի դրությամբ հայտարարագրել է 2 Ford մակնիշի մեքենա: 2022թ. սկզբում ոչ միայն «անհետանում է» Ford-երից մեկը, այլեւ վաճառքից առաջ փոխվում է մյուս Ford-ի տարեթիվը՝ 2018 թվականի արտադրությունը դառնում է մեկ տարով նոր՝ 2019 թվականի արտադրության:

Հետաքրքիր զուգադիպությամբ ՔՊ-ականների գրեթե բոլոր ձեռքբերումները (բնակարան, ավտոմեքենա, հագուստ, այլ) արձանագրվել են 2018թ. իշխանափոխությունից հետո: Ստացվում է, որ Նուարդ Վարդանյանը իրեն պատկանող Ford մակնիշի մեքենան, որը ձեռք է բերել 2018 թվականին 4 մլն դրամով (գրեթե 10 հազար ԱՄՆ դոլար), 2022 թվականին վաճառել է 13 հազար ԱՄՆ դոլարով որպես 2019 թվականի արտադրության մեքենա: Ըստ հայտարարագրի՝ Վարդանյանը 3 հազար ԱՄՆ դոլարի օգուտ է ստացել եւ փոխել մեքենայի արտադրման տարեթիվը: «Ժողովուրդ» օրաթերթը կապվեց ՔՊ խմբակցության ավագանու անդամ Նուարդ Վարդանյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչպես է դա ստացվել:

«Ընդհանրապես այդ հայտարարագիրը ոտքից գլուխ՝ ամբողջովին, սխալ է: Ես իրենց (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) նամակով էլ եմ դիմել, որ ուղղեն: Իրենք չեն ուղղել, եւ դա իմ սխալմունքը չէ: Խնդրում եմ՝ իրենց հետ կապվեք, որովհետեւ մի տան մասին էլ, որ ունեմ Կենտրոն վարչական շրջանում, երեք անգամ նշված է: Դիմել եմ իրենց, ասացին՝ Ձեզ կոդ կուղարկենք, համակարգի սխալ է եղել, Դուք կուղղեք: Այդ կոդը մինչեւ հիմա չեն ուղարկել: Ես չեմ կարող իրենց փոխարեն պատասխանել»: Ինչպես միշտ՝ բոլորը մեղավոր են, բացի ՔՊ-ականներից:

Ստացվում է, որ Նուարդ Վարդանյանը իրեն պատկանող Ford մակնիշի մեքենան, որը ձեռք է բերել 2018 թվականին 4 մլն դրամով՝ գրեթե 10 հազար ԱՄՆ դոլար, 2022 թվականին վաճառել է 13 հազար ԱՄՆ դոլարով որպես 2019 թվականի արտադրության մեքենա: Ըստ հայտարարագրի՝ Վարդանյանը 3 հազար ԱՄՆ դոլարի օգուտ է ստացել եւ փոխել մեքենայի արտադրման տարեթիվը:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացրել է Նուարդ Վարդանյանի՝ 2021 եւ 2022 թվականների տարեկան հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգում, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապահային ոստիկանություն» ծառայությունից եւ Պետական եկամուտների կոմիտեից հայցել տեղեկատվություններ, համապատասխանաբար, Նուարդ Վարդանյանին պատկանող տրանսպորտային միջոցների եւ վերջինիս եկամուտների վերաբերյալ, որոնց համադրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Նուարդ Վարդանյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել պարզաբանում:

Պարզաբանումը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ չի ստացվել:

***ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՎԱՆԴԱԼԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանական վանդալիզմի քաղաքականությանն անդրադարձել է ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանը: Ստորեւ ներկայացնում ենք գրառումը՝ համառոտ:

«Արցախի մշակութային ժառանգության նկատմամբ Ադրբեջանակն վանդալիզմի, ոչնչացման կամ յուրացման քաղաքականությունը շարունակվում է: Իրենց այս «գործունեության» մեջ ադրբեջանցիները միջազգային գործընկերներ են գտել եւ, ցավալիորեն, ձեռքերն հասել է Վատիկան:

Վատիկանում լույս տեսնող L'Osservatore Romano պարբերականում, Ռոսսելա Ֆաբիանիի ստորագրությամբ օրերս լույս է տեսել «Քրիստոնեության ակունքներն Ադրբեջանում. ալբանական առաքելական եկեղեցու հետքերով» բովանդակությամբ մի հոդված, ուր հեղինակը ներկայացնում է «Կովկասյան Ալբանիա»՝ իրականում Արցախ կատարած իր այսպես կոչված ուսումնասիրական-ճանաչողական այցը:

Հղում անելով տեղացի ինչ-որ գիտաշխատողի՝ հոդվածագիրը տարածում-ամրագրում է տարածաշրջանում հայերի եկվորության վարկածը՝ արձանագրելով, որ մենք ադրբեջանական հողեր են եկել Իրանից եւ Թուրքիայից: Մեկ այլ հաստատման համաձայն ուղիները բռնի դավանափոխ են եղել եւ առաքելական եկեղեցու հետեւորդ դարձել տեղի հայերի կողմից:

Ադրբեջան կատարած այցի ընթացքում Ռ. Ֆաբիանիին ուղեկցել է Ախունդովի աշակերտ, ալբանական մշակույթի «գիտակ» Ս. Հաջիեւան: Եվ, բնականաբար, հեղինակն անվերապահորեն եզրահանգում է կատարում, որ 13 դ. վանական համալիրներ Դադիվանքը /հոդվածում Խուդավենք է գործածվում/ եւ Գանձասարը/ հոդվածում՝ Գենջասար/ Ադրբեջանի տարածքում գտնվող ալբանական մշակույթի եւ ալբանական եկեղեցու խոշորագույն դրսեւորումներ են:

Ինչպես տեսնում եք Արցախի հայկական հետքի վերացման ադրբեջանական քաղաքականությունը նոր որակներ եւ դրսեւորումներ է ստանում: ... Ի դեպ վերոհիշյալ հոդվածում Դադիվանքը ներկայացվում է որպես ալբանական Վատիկան:

Հիշենք, որ «L'Osservatore Romano»-ն Վատիկանի միակ, ամենօրյա պարբերականն է, որ լույս է տեսնում 1861-ից...

Թե Ադրբեջանում սա ինչպես են հիմնավորում, պարզ է. հայկական մշակույթի յուրացումը կամ ոչնչացումն Ադրբեջանում պետական քաղաքականության առաջնահերթություն է:

Իսկ Ի՞ՆՉ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՆ-Ն եւ ԿԳՄՍ-Ն: Արցախի էթնիկ զտումին հաջորդող մշակութային ցեղասպանությունն էլ պիտի հանդուրժե՞ք ..

Հ.Գ. Իսկ ոչ վաղ անցյալում, Քրիստոնեության 1700 ամյակի շրջանակում Հռոմի պապ էր այցելում Հայաստան, Վատիկանում Սուրբ Նարեկացու արձան էր տեղադրվում ու Ցեղասպանության զոհերի հիշատակի պատարագ մատուցվում:

Հ.Գ. 2. բայց որքանով է արդարացված «Հայ ժողովրդի պատմությունը» «Հայաստանի պատմության» մեջ զետեղած իշխանություններից ակնկալիք ունենալը...»:

## ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՅԼԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Իսրայելը Գոլանի բարձունքների վրա գտնվող Մաջդալ Շամս գյուղի վրա հարձակման պատրվակով Լիբանանի վրա հարձակման դեպքում կբախվի ամենավճռական պատասխանին: Դրա մասին հայտարարել են Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլա Ալի Խամենեիի խորհրդական եւ Իսլամական Հանրապետության միջազգային հարաբերությունների ռազմավարական խորհրդի ղեկավար Քամալ Խարազին:

«Իսրայելը պետք է իմանա, որ եթե դիմի այս ռիսկին, կբախվի կոշտ պատասխանի: »,- շեշտել է Խարազին:

ՈՐԴԻՆ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ Է ՄՈՐԸ

# 73-ԱՄՅԱ ԿՆՈՋ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

**Ավարտվել է որդու կողմից մորը ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու, սպանության դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:**

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում կատարված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները:

Մասնավորապես՝ 2024թ. փետրվարի 7-ին հաղորդում է ստացվել այն մասին, որ օրեր առաջ՝ 2024թ. հունվարի 27-ին՝ ժամը 18:30-ին, տանը վայր ընկնելու հետեւանքով ստացած վնասվածքներով, «պոլիտրավմա» ախտորոշմամբ, բժշկական կենտրոն բուժօգնության է տեղափոխվել Նոր Խարբերդի 73-ամյա բնակչուհի:

Ձեռնարկված անհետաձգելի միջոցառումների արդյունքում պարզվել է, որ կինը վնասվածքները ստացել է, ոչ թե ընկնելու, այլ ծեծի ենթարկվելու հետեւանքով: Ուստի դեպքի առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի հատկանիշներով:

Նշված դեպքից շաբաթներ անց՝2024թ. փետրվարի 29-ին, հաղորդում է ստացվել այն մասին, որ շտապօգնության խումբը բուժօգնության է մեկնել Ն. Խարբերդի նույն հասցե, որտեղ իր տանը մահացած է հայտնաբերել 73-ամյա կնոջը, ով օրեր առաջ բազմաթիվ վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց:

Անմիջապես դեպքի վայր է մեկնել քննչական-օպերատիվ խումբը եւ վերջինիս հայտնաբերել հատակին ընկած ՝բազմաթիվ վնասվածքներով եւ խեղդամահ արված: Փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ: Որոշում է կայացվել՝նշված քրեական վարույթները միացնելու մասին:

Նախաքննությամբ հիմնավորվել է, որ երկու դեպքերում էլ տուժողին մարմնական վնասվածքներ հասցրել է նրա 53-ամյա որդին, ով, ըստ ստացված տվյալների, նախկինում եւս մոր նկատմամբ բռնություն է գործադրել:

2024 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, վերջինս Երեւան քաղաքի Նոր Խարբերդի իրենց տանը կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված բութ առարկայով հարվածներ է հասցրել իր մոր դեմքի եւ մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով բազմաթիվ վնասվածքներ՝ դիտավորությամբ մոր առողջությանը պատճառելով ծանր վնաս՝զուգորդված ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից ավելի կայուն կորստով:

Նշված դեպքից շաբաթներ անց՝2024թ. փետրվարի 29-ին՝ ժամը 08:00-ից մինչեւ 15:00-ի սահմաններն ընկած ժամանակահատվածում, դարձյալ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ 53-ամյա տղամարդը, կյանքից զրկելու դիտավորությամբ, ապակյա շշով եւ այլ առարկայով բազմաթիվ հարվածներ է հասցրել աջ վերին եւ ստորին վերջույթների կոտրվածքների հետեւանքով գիպսային անշարժացված վիճակում պառկած լինելու պատճառով դիմադրություն ցույց տալու կարողությունից զրկված, անօգնական վիճակում գտնվող իր մոր գլխի, դեմքի ու մարմնի տարբեր մասերին՝պատճառելով կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածքներ: Այնուհետեւ, հանցանքն ավարտին հասցնելու նպատակով, սեղմել է մոր պարանոցը եւ շնչահեղձ արել նրան: Նախաքննության ընթացքում նշանակված դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ տուժողի մահը վրա է հասել մեխանիկական շնչահեղձությունից, որը պայմանավորված է պարանոցի օրգանների սեղմումով:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարված քննչական գործողություններով տվյալներ են ստացվել նաեւ այն մասին, որ 53-ամյա տղամարդը, ըստ համապատասխան բուժհաստատությունից ստացված տեղեկանքի, դեռեւս 2001 թվականից հաշվառված է եղել «խրոնիկական ալկոհոլիզմ երկրորդ աստիճանի» ախտորոշմամբ: Քննության համար էական հանգամանքներ պարզելու նպատակով վերջինիս նկատմամբ նշանակվել է դատահոգեբանական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ ինչպես ներկայում, այնպես էլ մեղսագրվող արարքը կատարելու պահին նա գիտակցել է իր գործողությունների բնույթը, նշանակությունը վտանգավորությունը, կարող էր հաշիվ տալ իրեն՝կատարած արարքների համար, ղեկավարել դրանք, եւ վերջինս ճանաչվել է մեղսունակ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա տուժողի որդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166- րդ հոդվածի մասի 2-րդ մասի 6-րդ եւ 7-րդ կետերով եւ 155-րդ հոդվածի մասի 2-րդ մասի 3-րդ եւ 9-րդ կետերով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄՆԵՐ

## ԿՐԱԿՈՑԻ ՊԱՏՃԱՌԸ ԵՂԵԼ Է ԴԻՐՔՈՒՄ ՔՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Պարզվել են 2024թ. հունվարի 9-ին կատարված զինծառայող Կարեն Կարապետյանի սպանության մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում քննված քրեական վարույթով իրականացված քննչական եւ ապացուցողական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ զինծառայողի սպանության շարժառիթ է հանդիսացել վրեժխնդրությունը:

Մասնավորապես՝պարզվել է, որ դեպքի օրը՝ 2024 թվականի հունվարի 9-ին՝ ժամը 04:30-ից 05:00-ի սահմաններում, կոչումով լեյտենանտ Կ.Կարապետյանը ծառայողական հարցերի շուրջ, այն է՝ դիրքում քնելու կապակցությամբ առաջացած խոսակցության ժամանակ, վիրավորական արտահայտություն է հնչեցրել ծառայակցի՝Ն.Խ.-ի հասցեին:

Վերջինս, չհանդուրժելով իրեն հասցված վիրավորանքը, վրեժխնդրության շարժառիթով, 2024 թվականի հունվարի 9-ին՝ժամը 06:00-ի սահմաններում, մոտեցել է պառկած վիճակում գտնվող Կարեն Կարապետյանին, որից հետո նախ մենահատ, ապա կրակահերթ է արձակել վերջինիս ուղղությամբ՝պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ: Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին:

## ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Փոքր Վեդիի մանկապարտեզում սանի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքով ձերբակալված դաստիարակը ազատ է արձակվել: Այս մասին ArmLur.am-ին հայտնում են ՆԳՆ-ից: «Ձերբակալման 72 ժամը լրացել է, եւ նրա նկատմամբ խափանման միջոց ընտրելու հիմքեր չեն եղել», - հավելում են ՆԳՆ-ից: Հիշեցնենք, որ հուլիսի 26-ին համացանցում հրապարակվել էր տեսանյութ, որտեղ երեւում է, թե ինչպես է մանկապարտեզի աշխատակիցը ֆիզիկական բռնություն գործադրում, ծեծում երեխային: Նշենք նաեւ, որ երեխայի ծնողները բողոք չեն ներկայացրել ոստիկանություն:

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է 25 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԸ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում տվյալներ են ստացվել առ այն, որ ՍՊ ընկերության տնօրենը, խախտելով «Հողային», «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքերի մի շարք հոդվածների պահանջները, ինչպես նաեւ խախտելով հողերի եւ ընդերքի օգտագործման եւ պահպանության կանոններ սահմանող այլ իրավական ակտերի դրույթները, 2021 թվականի ընթացքում Արմավիր մարզի Ապագա համայնքին եւ մի շարք անձանց սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներում շրջակա միջավայրին եւ ընդերքին անզգուշությամբ պատճառել է էական վնաս:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2015թ.-ից վերոհիշյալ ՍՊ ընկերության սեփականատերն իրականացրել է լեռնային զանգվածի արդյունահանում ինչպես ընդերքօգտագործման թույլտվության սահմաններում, այնպես էլ՝ հարակից տարածքից:

Ընկերության կողմից, պատճառված վնասից, նախաքննության ընթացքում, կատարվել է 25.000.000 ՀՀ դրամի չափով վերականգնում:

Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում՝ վնասի մնացած մասը վերականգնելու եւ ներգրավված անձանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով:

## ԻՆՉ ԷՐ ՀԱՅՏՆԵԼ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ ՏՂԱՄԱՐԴԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝Սեւանի ճանապարհին, ըստ նախնական վարկածի, գոտիով իրեն կյանքից զրկած տղամարդը նամակ է թողել: Մասնավորապես, նա գրել է, որ կատարվածի համար որեւէ մեկը մեղավոր չէ, եւ նշված քայլին դիմել է կուտակված պարտքերի պատճառով:

Shamshyan.com-ը գրել էր, որ հուլիսի 29-ին առեղծվածային դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում:

Տեղում ոստիկանները, պարեկներն ու քննիչները նշված վայրում հայտնաբերել են «Nissan Rogue» մակնիշի ավտոմեքենա, վարորդի նստատեղին էլ՝ վարորդի դին, պարանոցին էլ՝ ինչոր կասկածելի գոտի գցած:

Տեղի ունեցածը սպանություն է, թե ինքնասպանություն, պարզվում է:

Քննիչի հանձնարարականով ավտոմեքենան տեղափոխվում է ոստիկանության պահպանվող հատուկ տարածք:

Տեղում պարզվել է նաեւ, որ մահացածը Երեւանի բնակիչ 45-ամյա Արտակ Մ.-ն է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 29-ից հուլիսի 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 130 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ ՀՆԴԻԿՆԵՐ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ

Սահմանազատման անվան տակ նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի ու Կիրանցի տարածքներն Ադրբեջանին հանձնելուց հետո՝ սահմանագոտում կառուցվում են գաղտնի օբյեկտներ, յուրաքանչյուրը՝ միլիոնավոր եվրոների արժողությամբ: Այդ օբյեկտները կառուցվում են ժամանակակից չափանիշներին համապատասխան ու մեծ նշանակություն ունեն Հայաստանի տարածքի պաշտպանության համար: Սահմանագոտու բնակիչներից իմացանք, որ գաղտնի այդ օբյեկտների շինարարությունում, որպես էժան աշխատուժ, ներգրավել են հնդիկ բանվորների: Կիրանց գյուղի տարածքում, իբրեւ անվտանգության նկատառումներից ելնելով՝ հայաստանցի լրագրողներին արգելում են նկարահանումներ անել, սակայն ռազմական մեծ նշանակություն ունեցող գաղտնի օբյեկտների շինարարությունում այլ երկրի քաղաքացիներ՝ հնդիկներ են աշխատում: Կիրանց գյուղի բնակիչներից տեղեկացանք, որ հնդիկ բանվորներ են աշխատում նաեւ Աճարկուտ-Կիրանց ավտոճանապարհի շինարարությունում: Տեղացիները հնդիկներին տեսել են նորակառույց ճանապարհի եզրին մետաղյա արգելապատնեշներ դնելիս:

## Ո՞Վ ԷՐ ԿԱՌՈՒՑԵԼ ԽԱՇԹԱՌԱԿԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Իջեւան համայնքի Խաշթառակ գյուղի ժամանակավոր կամուրջն ընդամենը 3 օր աշխատեց, 4-րդ օրը՝ հուլիսի 28-ին՝ ժամը 15:15-ի սահմաններում, վարարած Աղստեւը սրբել-տարել է կամրջի ձախ եզրի հողը՝ շարքից հանելով կամուրջը: Տեղում տեսանք, որ փրկարար ծառայության աշխատակիցները դեղին ժապավեն կապելով եւ տեղում հերթապահություն սահմանելով՝ արգելափակել էին վթարային դարձած կամրջի մուտքը: Այդ կամուրջը կառուցել էին Աղստեւ գետի մեջ տեղադրելով երկաթբետոնե սնամեջ ուղղանկյուններ, որոնց վրա ասֆալտապատում էին կատարել: Այդ ժամանակավոր կամուրջը հիմնականում ծառայում էր Խաշթառակ ու դրան հարակից Լուսահովիտ գյուղի բնակիչներին: Այժմ այդ 2 գյուղերի կապը Իջեւան քաղաքի «Ռեմբազի թաղի» հետ իրականացվում է գրունտային ճանապարհով: Հուլիսի 16-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, նրան հարցնելով՝ որ կազմակերպությունը, ինչքան գումարով է իրականացնում Խաշթառակի ժամանակավոր կամրջի եւ Տավուշի մարզում ընթացող մի քանի ճանապարհների շինարարությունը: Մարզպետը, պատասխանելով հարցման մեջ առկա այլ հարցերին՝ միտումնավոր կերպով անտեսել է այդ հարցը: Նույն հարցապնդումն ուղարկել ենք նաեւ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սերժիկ Պետրոսյանին, հիմնադրամից պատասխանել են, որ իրենք հարցմանը կպատասխանեն լրացուցիչ ուսումնասիրություններից հետո:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

«ԿԱՍՊԵՐՍԿԻ»

# ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ

**CrowdStrike EDR լուծման հուլիսի 19-ի ոչ կոռեկտ թարմացումն աշխարհով մեկ անդրադարձել է Windows-ով աշխատող սարքերի վրա, որոնք բոլորը նույն ժամին կորպորատիվ օգտատերերին ցույց են տվել «մահվան կապույտ էկրան» (BSOD): Խափանումն ազդել է, օրինակ, ԱՄՆ-ի, Խորվաթիայի, Գերմանիայի, Նիդերլանդների եւ այլ երկրների օդանավակայանների տեղեկատվական համակարգերի վրա:**

«Կասպերսկի» ընկերության տվյալներով՝ ուրբաթ՝ հուլիսի 19-ի առավոտյան, ամբողջ աշխարհում օգտատերերը հայտնել են Windows-ի հետ կապված խնդիրների մասին: CrowdStrike-ը հաստատել է, որ սկզբնապատճառը CrowdStrike EDR-ի csagent.sys կամ C-00000291*.sys դրայվերում է:

Ամենից շատ տուժել են ավիացիոն ընկերությունները, օդանավակայանները, տարբեր բժշկական կենտրոններ, ցանցային խանութներ, Նյու Յորքի մետրոն, Հարավային Աֆրիկայի խոշորագույն բանկը եւ շատ այլ կազմակերպություններ: Խափանումից տուժածների ամբողջական ցանկը կարելի է ուսումնասիրել հղմամբ:

«Կասպերսկի»-ում համարում են, որ բավական խնդրահարույց է գնահատելը, թե որքան ժամանակ կպահանջվի աշխարհում այս կամ այն տեղեկատվական համակարգերի ամբողջական վերականգնման համար: Ամեն ինչ բարդանում է նրանով, որ օգտատերերին անհրաժեշտ է ձեռքով վերագործարկել իրենց համակարգիչներն անվտանգ ռեժիմում: Իսկ խոշոր կորպորացիաներում դա, որպես կանոն, հնարավոր չէ անել ինքնուրույն՝ առանց համակարգային ադմինիստրատորի օգնության:

Այնուամենայնիվ, CrowdStrike-ի հետ կապված խնդրից՝ դրա դրայվերի թարմացման առաջացրած մահվան կապույտ էկրանից ազատվելու համար անհրաժեշտ է.

Գործարկել համակարգիչը անվտանգ ռեժիմում:

Անցնել C:\Windows\System32\drivers\CrowdStrike. Գտնել եւ ջնջել csagent.sys կամ C-00000291*.sys նիշքը:

Վերագործարկել համակարգիչը նորմալ ռեժիմում:

«Կասպերսկի»-ի փորձագետների կարծիքով՝ նման իրավիճակից հնարավոր էր խուսափել բավականին պարզ եղանակով: Առաջինը՝ չթողարկել թարմացումներն ուրբաթ օրը: Սխալի դեպքում շտկման համար շատ քիչ ժամանակ է մնում. CrowdStrike-ի խափանումից տուժած բոլոր ընկերությունների համակարգային ադմինիստրատորները խնդիրը շտկելու համար գրեթե հաստատ աշխատել են բոլոր հանգստյան օրերին:

«Բայց ամենակարեւորը թողարկված թարմացումների որակին առավելագույն պատասխանատվությամբ վերաբերվելն է: Մենք «Կասպերսկի» ընկերությունում դեռեւս 2009-ին գործարկել ենք մեր հաճախորդների մոտ զանգվածային խափանումների կանխարգելման ծրագիրը եւ անցել SOC 2 աուդիտ, որը հաստատում է ներքին գործընթացների անվտանգությունը: Ահա արդեն 15 տարի յուրաքանչյուր թարմացում անցնում է աշխատունակության բազմաստիճան ստուգում տարբեր կոնֆիգուրացիաներում եւ օպերացիոն համակարգերի զանազան տարբերակներում: Սա մեզ թույլ է տալիս նախապես բացահայտել հնարավոր խնդիրները եւ լուծել դրանք «ափին»: Անհրաժեշտ է հետեւել ռելիզների փոքր փուլերով թողարկման սկզբունքին: Հարկ է թարմացումները տարածել աստիճանաբար, այլ ոչ թե միանգամից բոլոր հաճախորդներին: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս անհապաղ արձագանքել եւ, անհրաժեշտության դեպքում, կանգնեցնել թարմացումը: Եթե մեր օգտատերերն ինչ-որ խնդիր են ունենում, ապա մենք անպայման գրանցում ենք այն, դրա լուծումը դառնում է գերակայություն ընկերության բոլոր մակարդակներում»,- տեղեկացնում է «Կասպերսկի»-ն՝ պարզաբանելով, որ ինչպեսեւ կիբեռանվտանգության միջադեպերի դեպքում, տեսանելի վնասը վերացնելուց բացի, անհրաժեշտ է գտնել սկզբնապատճառը՝ ապագայում նման կարգի խնդիրները կանխելու համար: Անհրաժեշտ է թեստային ենթակառուցվածքում ստուգել ծրագրային պրոդուկտների թարմացումների աշխատունակությունը նախքան ընկերության «մարտական» ենթակառուցվածքում ծավալելը, աստիճանաբար ներդնել փոփոխությունները՝ վերահսկելով հնարավոր խափանումները:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

ՏԵԽՆՈՃԱՄԲԱՐ

# ԱՆՑԿԱՑՎԵՑ 10-ՐԴ «ԱՐՄԱԹ»-Ը

**Հուլիսի 19-28 Դիլիջանի Մոնթե Մելքոնյանի անվան վարժարանում անցկացվեց «Արմաթ» ամառային տեխնոլոգիական ճամբարը՝ նախատեսված 10-14 տարեկան դպրոցականների համար: Հայաստանի տարբեր մարզերից մասնակիցները միավորվեցին կրթության, ժամանցի, սպորտի, մշակույթի եւ հայրենաճանաչողական արշավների շուրջ՝ ստանալով հիմնարար գիտելիք, գործնական հմտություններ ու թիմում աշխատելու փորձ:**

Ճամբարին մասնակցեց 100-ից ավելի երեխա ՀՀ տարբեր մարզերից՝ ինչպես նոր ներդրված «Արմաթներից», այնպես էլ վաղուց «Արմաթներ» հաճախող եւ նույնիսկ «Արմաթ» չհաճախող պատանիներ: Տեխնոճամբարը կապող օղակ հանդիսացավ բոլոր մարզերի պատանիներին իրար կապելու, ընկերացնելու եւ ապակենտրոն կրթություն ապահովելու համար:

Անցկացվեց ռոբոտաշինության մրցույթ, լողի, ֆուտբոլի միջջոկատային առաջնություններ, ինտելեկտուալ խաղեր, ազգային պարի դասընթաց, ՈՄԱ վարժանքներ՝ կրակային պատրաստություն, առաջին բուժօգնություն, ժայռամագլցում, հանդիպում համայնքի ներկայացուցիչների հետ եւ այլն: Հաղթող ջոկատները պարգեւատրվեցին:

Նպատակն էր՝ խտացված օրակարգով, մասնակիցներին հիմնովի պատկերացում տալ ճարտարագիտական աշխարհի մասին, համայնքի մաս դարձնել, որն էլ իր հերթին նրանց հետագա ուսումնառությունն ավելի արդյունավետ կդարձնի: Այդ 9 օրերի ընթացքում տեխնոճամբարը խթանեց պատանիների թիմային մտածելակերպը, բացահայտեց նրանց ուժեղ եւ թույլ կողմերը, սովորեցրեց հետադարձ կապի հմտությունը եւ արդյունակենտրոն աշխատանքը:

Ճամբարում երեխաների առօրյան հագեցած էր. ռոբոտաշինության մրցույթին նախապատրաստություն, Ողջ Մնալու Արվեստի վարժանքներ (ՈՄԱ), առաջին բուժօգնության դասընթաց, լողի ու ֆուտբոլի առաջնություն ջոկատների միջեւ, ինտելեկտուալ ու ժամանցային խաղեր, քայլարշավ եւ այլն:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 3 մարդ զոհվել է, 18-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

## ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱՃԵԼ ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ԳՆԵՐԸ

Հեղուկ գազի գները վարորդների համար դարձել էին մղձավանջ հիշեցնող «անակնկալ»:

Բանն այն է, որ հեղուկ գազի գները շեշտակի թանկացել են, սակայն, ինչպես նկատելի է, այն եւ թանկանում է, եւ էժանանում:

«Մի քանի անգամ նման դեպքեր եղել են, երբ մատակարարում չի լինում՝ ճանապարհների խցանումների կամ, ասենք, ճանապարհները սառած լինելու, Վերին Լարսը փակ լինելու դեպքում եւ այլն: Ընդհանրապես, եղած-չեղածը մի քանի ցիստեռն են բերում, Հայաստանում հեղուկ գազ քիչ են օգտագործում, եւ դրա համար մի քանի օր չլինելու դեպքում՝ գները սկսում են աճել»,- այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց տնտեսագետ Գագիկ Մակարյանը:

Տնտեսագետը նաեւ նշեց, որ երբ նորից հեղուկ գազ են բերում Հայաստան, դրա գինը սկսում է նվազել՝ հետ գալ նախնական գնին:

«Հիմա այդ փուլերից մեկն է, երբ Ռուսաստանից հեղուկ գազ բերելը դժվարանում է, դե հիմա Վերին Լարսը խցանված է, կարող է դա էլ պատճառ լինել, որ ուշանա, ու, քանի որ սպառումը կա, բայց քանակ չկա, սկսում է գինը աճել: Նույնն էլ բենզինի դեպքում է: Դիֆիցիտն է բերում գնի թանկացման»,- եզրափակեց տնտեսագետը:

## ԳՈՒՄԱՐԸ ԿՆՎԱՋԵՑՎԻ

Հանրային մուլտիպլեքսի միջոցով հեռարձակում իրականացնող մի շարք մարզային հեռուստաընկերություններ 2024 թվականի հունիսի 27-ին աջակցություն ստանալու խնդրանքով դիմել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանին. որոշվել է նվազեցնել պայմանագրային գումարը՝ սահմանելով համահարթ վարձավճար:

Այս մասին տեղեկացնում են ԲՏԱ նախարարությունից:

«Հեռուստաընկերությունների կողմից ներկայացված մտահոգություններն ու փաստարկները հիմնականում վերաբերում էին վերջիններիս ֆինանսական եկամուտների կտրուկ նվազմանը, ինչն էլ իր հերթին բերում է պարտքերի կուտակման եւ մոտ ապագայում կարող է հանգեցնել հեռուստաընկերությունների փակմանը:

Որոշում է կայացվել 2024 թվականի օգոստոսի 1-ից 20-40 տոկոսով նվազեցնել հանրային մուլտիպլեքսում հեռարձակվող մարզային հեռուստաընկերությունների պայմանագրային գումարը՝ յուրաքանչյուրի համար սահմանելով ամսական 200 հազար դրամ համահարթ վարձավճար:

Հարկ է նշել, որ որոշումը կայացնելիս հաշվի է առնվել նաեւ փոքր քաղաքների եւ գյուղերի բնակչության շրջանում մարզային հեռուստաընկերությունների մեծ պահանջարկը, ինչպես նաեւ դրանց կայուն զարգացման ռազմավարական նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՈՐՈՇՈՒՄ

# ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ՝ 7.75%

**ՀՀ կենտրոնական բանկը հայտարարություն է տարածել՝ նշելով. «2024 թվականի հուլիսի 30-ի նիստում ԿԲ Խորհուրդը որոշեց իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 7.75%: ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ ավելի ցածր վերաֆինանսավորման տոկոսադրույքն անհրաժեշտ է միջնաժամկետում գնաճի 4% մակարդակի եւ գների կայունության նպատակի իրագործման համար:**

2024 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում 12-ամսյա գնաճը շարունակել է պահպանվել նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում՝ հունիսին կազմելով 0.8%: 12-ամսյա բնականոն գնաճը մնացել է անփոփոխ՝ հունիսին կազմելով 0.0%:

2024 թ.-ի երկրորդ եռամսյակում համաշխարհային եւ Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի դանդաղման ռիսկերը պահպանվել են: Համաշխարհային գնաճը շարունակում է դանդաղել, սակայն գործընկեր երկրներում կոշտ գներով բնութագրվող ապրանքների եւ ծառայությունների գները դեռեւս մնում են հարաբերականորեն բարձր: Միաժամանակ, գործընկեր երկրներում գերտաքացած աշխատաշուկայի պայմանները շարունակում են նպաստել բարձր պահանջարկի պահպանմանը: Չեւավորված աշխարհաքաղաքական անորոշությունները, ինչպես նաեւ միջազգային առեւտրային հարաբերություններում աճող լարվածությունը որոշակի ռիսկեր են առաջացրել միջազգային ապրանքահումքային շուկայում գների հետագա աճի եւ առաջարկի արժեշղթաների հնարավոր խաթարման տեսանկյունից: Այս համատեքստում հավանական է, որ գործընկեր երկրների կենտրոնական բանկերը, մասնավորապես՝ ԱՄՆ ԴՊՀ-ն, ավելի երկար կպահպանեն դրամավարկային խիստ պայմանները: Արդյունքում՝ արտաքին հատվածից թույլ գնանկումային ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա դեռեւս պահպանվում են:

2024 թ.-ի երկրորդ եռամսյակում Հայաստանում պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն, որին մեծապես նպաստել է շինարարության, առեւտրի եւ արդյունաբերության ճյուղերի զգալի աճը: Վերջինս շարունակում է կրել որոշ կարճաժամկետ գործոնների ազդեցությունը՝ պարունակելով էական անորոշություններ տնտեսական աճի կայունության, երկարաժամկետ հեռանկարի, ինչպես նաեւ ներքին պահանջարկի եւ սպառման հետագա միտումների վերաբերյալ: Ներքին ծառայությունների նկատմամբ արտաքին պահանջարկը 2023 թ.-ի համեմատությամբ դանդաղում է: Միեւնույն ժամանակ, հարկաբյուջետային քաղաքականության կողմից պահանջարկի լրացուցիչ խթանման ռիսկերը շարունակում են մնալ առարկայական: Աշխատաշուկայի պայմանները որոշակիորեն մեղմվում են՝ արտահայտվելով աշխատավարձերի աճի տեմպի նվազմամբ: Ջուգահեռաբար, կոշտ գներով բնութագրվող ծառայությունների գնաճը եւ գնաճային սպասումները շարունակում են նվազել:

ԿԲ Խորհուրդը, առկա անորոշություններից բխող հնարավոր ռիսկերը կառավարելու նպատակով իր քննարկումների ընթացքում դիտարկում է բազմաթիվ սցենարներ: Մի կողմից, ԿԲ Խորհուրդը քննարկել է սցենարներ, որոնց հիմքում ընկած զարգացումները, այդ թվում՝ գործընկեր երկրներում ավելի երկար պահպանվող խիստ դրամավարկային պայմանները, ինչպես նաեւ աշխարհաքաղաքական եւ հարկաբյուջետային քաղաքականությունից բխող՝ երկրի ռիսկ-հավելավճարի եւ չեզոք տոկոսադրույքի հետ կապված անորոշությունները, պահանջում են քաղաքականության՝ շուկայական սպասումների համեմատությամբ ավելի կոշտ արձագանք՝ գների կայունության նպատակի ապահովման ռիսկերը կառավարելու համար: Մյուս կողմից, ԿԲ Խորհուրդը քննարկել է սցենարներ, որտեղ հնարավոր տնտեսական զարգացումները, այդ թվում՝ տնտեսական աճի կառուցվածքային առանձնահատկությունների եւ աշխատաշուկայի պայմանների թուլացման համատեքստում ցածր պահանջարկի ձեւավորման ռիսկերը կարող են հանգեցնել գնաճի՝ ցածր մակարդակում երկար պահպանմանը: Վերջինս ենթադրում է քաղաքականության տոկոսադրույքի՝ շուկայի սպասումների համեմատությամբ ավելի արագ եւ մեծ չափով նվազման ուղի՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճը նպատակային ցուցանիշի շուրջ կայունացնելու համար:

Արդյունքում՝ նշված սցենարներից բխող հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելու մոտեցման ներքո, հավասարակշռելով վերը նշված երկու ուղղությամբ ռիսկերը, ԿԲ Խորհուրդը որոշեց շարունակել դանդաղ տեմպերով իջեցնել քաղաքականության տոկոսադրույքը:

ԿԲ Խորհուրդը հայտնում է իր հանձնառությունը համարժեք գործողություններով միջնաժամկետ հորիզոնում գնաճի 4% մակարդակի եւ գների կայունության նպատակի ապահովման համար»:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Արարատի մարզ, համայնք Արգավանդ, Կենտրոնական փողոց, 24 հասցեում գտնվող 160,56 քմ բնակելի տուն, 46,95 քմ դալան, 140,59 քմ ավտոտնակ եւ 0,104169 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14250000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 16.08.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝16.09.2024թ.- ին:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝գույքը գրավադրված է:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

WCIT2024/DigiTec

# ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ՝ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

**Հայաստանի Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ) փոխըմբռնման հուշագիր ստորագրեց (MoU) ՖԵՄԻՆՆՈ մշակութա-նորարարական հարթակի հետ՝ համագործակցելու 2024թ. Նորարարության եւ Տեխնոլոգիաների Համաշխարհային Համաժողովի՝ WCIT2024/DigiTec-ի շրջանակներում կանանց մասնակցության ակտիվացման շուրջ:**

ԱՏՁՄ-ի եւ ՖԵՄԻՆՆՈ-ի միջեւ կնքված հուշագիրը խորհրդանշում է համագործակցության ձեւաչափ, որն ուղղված է կոնգրեսում կանանց ներգրավվածության եւ մասնակցության խթանմանը՝ ընդգրկելով թե՛ տեղական, թե՛ միջազգային հանրույթն ու համայնքը: Միավորելով իրենց ռեսուրսներն ու գործընկերների կապերը, այս համագործակցությունը նպատակ ունի WCIT2024/DigiTec-ը դարձնելու նշանակալի իրադարձություն՝ հատկանշելով կանանց դերը տեխնոլոգիական ոլորտում՝ Հայաստանը ներկայացնելով նաեւ որպես կանանց նորարարության եւ առաջնորդության առաջատար կենտրոն:

WCIT2024//DigiTec-ի կազմկոմիտեի գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանը եւ ՖԵՄԻՆՆՈ մշակութա-նորարարական հարթակի հիմնադիր Սեդա Պապոյանը փոխանակվեցին հուշագրերով եւ կարճ ելույթով հայտարարեցին հուշագրի մասին՝ համատեղ ջանքերով խթանելու WCIT2024/DigiTec-ը:

«Ֆեմինոյի հետ համագործակցության միջոցով մենք նպատակ ունենք հարստացնելու WCIT2024/DigiTec-ի օրակարգը կանանց ավելի մեծ ներկայացվածությամբ: Իմ անձնական փորձից գիտեմ, որ Հայաստանում ընկերություններում ղեկավար պաշտոնների շուրջ 40 տոկոսը զբաղեցնում են կանայք:

Այս համագործակցության միջոցով մենք ձգտում ենք հարստացնել մեր միջոցառումը՝ ներգրավելով ավելի շատ մասնագետների, որոնք քննարկումներին կբերեն իրենց մասնագիտական փորձառությունը:

Այս համագործակցությունը երաշխավորում է, որ մեր օրակարգը կլինի ոչ միայն համապարփակ, այլ նաեւ բազմազան եւ ներառական, արտացոլելով կանանց իրական ներուժը տեխնոլոգիական ոլորտում»,- ասաց WCIT2024//DigiTec-ի կազմկոմիտեի գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանը:

Այս համագործակցությունը նպատակ ունի ընդգծելու այդ թվում նաեւ կոնգրեսի «ԱԲ-ի կանացի հմայքը» (The Grace of AI) հանդիպումների շարքի կարեւորությունը, որը նվիրված է գենդերային հավասարության եւ թվային ոլորտում տնտեսական հզորացման խթանմանը: Այս գործընկերությունը ցույց է տալիս ավելի ներառական տեխնոլոգիական միջավայրի ստեղծման հանձնառությունը՝ ապահովելով հարթակ, որտեղ կանայք կլինեն առավել ներկայացված ու լսելի:

«Որպես առանձնահատուկ ուղղվածություն ունեցող կազմակերպություն՝ մենք միշտ ձգտում ենք ավելի մեծ ճանաչման եւ ներկայացվածության: Այսպիսի մասշտաբի միջոցառման հետ համագործակցությունը ոչ միայն համախմբում է մեզ, այլեւ ուժեղացնում մեր ջանքերը՝ Հայաստանի համար նշանակալի ազդեցություն գրանցելու համար: Այս համագործակցությունը կարեւոր քայլ է մեր առաքելությունում՝ ընդլայնելու կանանց հնարավորություններն ու հասնելու ավելի մեծ արդյունքների»,-ասաց ՖԵՄԻՆՆՈ մշակութա-նորարարական հարթակի հիմնադիր Սեդա Պապոյանը:

WCIT2024/DigiTec-ը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 4-7-ին Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում՝ «ՄՏՔԻ ՈՒԺԸ. Արհեստական բանականություն՝ սահմաններից այն կողմ՝ էթիկայի շրջանակներում» խորագրով:

WCIT2024/DigiTec-ի անցկացման չորս օրերին Հայաստանը կվերածվի տեխնոլոգիական մտքի կենտրոնի՝ հանդիսանալով հարթակ ոլորտի եւ թեմայի շուրջ առաջատար համաշխարհային խոսնակների ելույթների, պանելային քննարկումների եւ B2B հանդիպումների համար: Համաժողովի շրջանակներում կանցկացվի նաեւ WITSA World Cup ստարտափների մրցույթը, կներկայացվեն նորարարական ցուցադրություններ, բիզնես ներկայացումներ, սեմինարներ եւ այլ միջոցառումներ:

WCIT2024/DigiTec համաժողովը կդառնա գլոբալ հարթակ, որը նպատակ ունի՝

- ներկայացնելու հայաստանյան, եւ ոչ միայն, տեխնոլոգիական ներուժը Դիջի-Թեք էքսպոյի շրջանակներում, որը հանդիսանալու է հիմնական էքսպո հարթակը WCIT2024/DigiTec-ի համար,
- ուժեղացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը, իրազեկելու նորարարարությունների ու ԱԲ վերջին եւ ապագա զարգացումների շուրջ,
- Հայաստանը ներկայացնելու միջազգային հարթակներում եւ դիրքավորելու որպես նոր տեխնոլոգիական հաբ տարածաշրջանի համար,
- խթանելու ներդրումները եւ ընդգծելու ՏՀՏ լուծումների կարեւորությունը տարբեր տարածաշրջաններում եւ տնտեսություններում:

Համաժողովի օրակարգը ընդգրկում է լայն աշխարհագրությամբ մասնակիցների՝ ավելի քան 2,000 միջազգային պատվիրակներ կայցելեն Հայաստան միջոցառման օրերին:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

«ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ»

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է 50 ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ

**Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի իրականացրած «Վարպետաց դասեր» խորագրով «Գրադարանավարների վերապատրաստման դասընթացներ» ծրագիրն ամփոփվել է:**

Վերապատրաստման դասընթացներն անցկացվել են Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում երկու փուլով՝ հուլիսի 2-4-ը եւ 24-26-ը:

Դասընթացներին մասնակցել են Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Կոտայքի եւ Վայոց ձորի մարզային եւ համայնքային գրադարանների 50 աշխատակիցներ:

Նախարարության աջակցությամբ իրականացվող ամենամյա ծրագրի նպատակն է ապահովել շարունակական կրթությունը գրադարանային ոլորտում, նպաստել գրադարանավարների մասնագիտական աճին եւ կարողությունների զարգացմանը: Եռօրյա դասընթացների շրջանակում Խնկո Ապոր անվան ազգային մանկական, Ամերիկյան համալսարանի Փափազյան, Ավ. Իսահակյանի անվան քաղաքային, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրադարանների փորձառու գրադարանավարներն ու ոլորտի մասնագետները ծրագրի մասնակիցներին ներկայացրել են գրադարանային գործի գործառույթների վերաբերյալ նոր գիտելիքներ, հմտություններ, խոսել ոլորտային մարտահրավերների հաղթահարմանն ուղղված արդի մոտեցումների մասին: Նշենք, որ «Գրադարանավարների վերապատրաստման դասընթացներ» ծրագիրը միտված է նաեւ ամրապնդելու գործընկերային կապերը, նպաստելու համագործակցության զարգացմանը մարզային ու համայնքային գրադարանների միջեւ: Դասընթացների ավարտին ծրագրի բոլոր մասնակիցները ստացել են հավաստագրեր:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՈՐՔԱՆ Է ՎՃԱՐՈՒՄ ՍՊԵՐՑՅԱՆԻ ՏՐԱՆՍՖԵՐԻ ԴԻՄԱՑ

«Կրասնոդարը» պատրաստ է դիտարկել կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի տեղափոխությունը Եվրոպայի թոփ առաջնություն ոչ պակաս, քան 18 միլիոն եվրոյի առաջարկի դիմաց, հաղորդում է Metaratings-ը:

Աղբյուրի փոխանցմամբ՝ ֆրանսիական «Լանսն» արդեն առաջին առաջարկն արել է, բայց ավելի քիչ է առաջարկել նշված գումարից: Ֆրանսիական ակումբը դեռ չի հրաժարվել բանակցություններից: Նշվում է նաեւ, որ կրասնոդարյան ակումբը կարող է խնդրել «Լանսին» մի քանի փուլով վճարել 18 մլն եվրո ֆուտբոլիստի տրանսֆերի դիմաց: Սպերցյանի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերում նաեւ եվրոպական առաջնությունների այլ թիմեր, սակայն պաշտոնական առաջարկ դեռ չի եղել:

24-ամյա Սպերցյանը «Կրասնոդարի» հիմնական թիմում հանդես է գալիս 2021 թվականից: Նախորդ մրցաշրջանում Էդուարդը բոլոր մրցաշարերում մասնակցել է 33 հանդիպման, որոնցում դարձել է 11 գոլի եւ 7 գոլային փոխանցման հեղինակ: Նրա գործող աշխատանքային պայմանագիրն ակումբի հետ նախատեսված է եւս երկու մրցաշրջանի համար: Transfermarkt-ի համաձայն՝ ֆուտբոլիստի արժեքը գնահատվում է 20 միլիոն եվրո:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ՉՈՐՐՈՐԴ ՏԵՂՈՒՄ

Բասկետբոլի Եվրոպայի Մ18 առաջնության C դիվիզիոնում տղամարդկանց Հայաստանի հավաքականը գրավել է չորրորդ տեղը: Երրորդ տեղի համար խաղում Սեւակ Քեթենջյանի գլխավորած թիմը 53-79 հաշվով պարտվել է Ալբանիայի հավաքականին:

Հայ բասկետբոլիստները մրցաշարում անցկացրել են չորս հանդիպում, տարել մեկ հաղթանակ, կրել երեք պարտություն:

## ՀՂԻՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ԱՄՍՈՒՄ՝ ՀԱՂԹԵԼ Է ՄՐՑԱԿՑԻՆ

Եգիպտոսցի սուպերամարտիկ Նադա Հաֆեսը հղիության 7-րդ ամսում մասնակցել է 2024 թվականի Փարիզի Օլիմպիական խաղերին: Այս մասին մարզիկը խոսել է սոցցանցերում:

«Մենք իրականում երեք հոգով էինք հարթակում: Դա ես էի, իմ մրցակիցը եւ իմ դեռ չծնված երեխան: Ես ու երեխաս շատ դժվարություններ ունեինք՝ թե՛ ֆիզիկական, թե՛ էմոցիոնալ: Բախտս բերել է, որ անվերապահորեն ունեմ ամուսնուս եւ ընտանիքիս աջակցությունը»,- գրել է մարզիկը սոցցանցերում:

26-ամյա մարզուհուն հաջողվել է 1/16-րդ փուլում հաղթել ամերիկացի մրցակցին՝ Էլիզաբեթ Տարտակովսկին՝ 15:13 հաշվով: Սակայն 1/8-րդ եզրափակիչում Հաֆեսը 7:15 հաշվով պարտվել է հարավկորեացի մրցակցին՝ Չունգ Հայունգին:

● *Օգոստոսի 4-ին՝ ժամը 18:00-ին, Բյուրականի Հանդart մշակութային այգում կցուցադրվի «Յանկապատ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 5000-12000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿՐԹԱԿԱՆ

**Հարց. Ես ուզում եմ իմանալ՝ ով կարող է աշխատել որպես ուսուցիչ:**

*Սիլվա Մելքոնյան (46 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ի՞նչ պետք է անի անձը կենսաթոշակի անցնելու համար:**

*Սուսաննա Մարտիրոսյան (39 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կենսաթոշակ նշանակող մարմին: Այսպես, տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմումը,
2) անձը հաստատող փաստաթուղթը,
3) հանրային ծառայությունների համարանիշը,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եկեղեցականի դեպքում՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի) տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝համացանցից*

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում այս տարվա հուլիսի 4-ից 14-ը հայտարարված գեղանկարչական սիմպոզիումի ընթացքում ստեղծված 47 բարձրարժեք կտավները պահ տրվեցին Մարտունու համայնքապետարանին՝ առայժմ զարդարելով քաղաքի մշակույթի տան դահլիճի նախասրահը: Մրցույթն ամփոփվեց օրերս՝ հուլիսի 28-ին:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | +8 + 13<br>+19 + 23 |
| Կոտայքի լեռներ | +8 + 12<br>+18 + 21 |
| Կոտայքի նախալեռներ | + 16+ 18<br>+25 + 27 |
| Գեղարքունիք | + 8+ 12<br>+17 + 20 |
| Լոռի | + 11+ 14<br>+18 + 21 |
| Տավուշ | + 14+ 18<br>+20 + 23 |
| Արագածոտնի լեռներ | + 8 + 11<br>+17 + 20 |
| Արագածոտնի նախալեռներ | +16 + 18<br>+25 + 28 |

| | |
|---|---|
| Արարատ | + 18 + 20<br>+28 + 30 |
| Արմավիր | + 17+ 19<br>+28 + 30 |
| Վայոց ձորի լեռներ | +10 + 12<br>+18 + 21 |
| Վայոց ձորի նախալեռներ | +18 + 20<br>+28 + 30 |
| Սյունիքի հովիտներ | + 17 + 21<br>+23 + 26 |
| Սյունիքի նախալեռներ | + 11 + 14<br>+18 + 21 |
| ԼՂՀ | + 12 + 16<br>+18 + 20 |
| Երեւան | + 18 + 20<br>+ 30 + 32 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.7.2024**
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ
չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային
հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս
կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել
հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք
կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*